բեգյանի ձևակերպմամբ՝ «ընթացել են V դարի պատմագրության մեջ արդեն դրսևորված գիտական, գեղարվեստական, ժանրային և ոճական հիմնական հատկանիշները տարբեր ձևերով շարունակելու և զարգացնելու ուղիով՝ ամեն անգամ տվյալ պատմիչ-գրողի դարաշրջանի, անհատականության և նրա առջև կանգնած կոնկրետ խնդիրներին համապատասխան»[2]:

Ավանդաբար «Գիրք պատմութեանց» աշխատությունն առանձնացվել ու գնահատվել է նախևառաջ որպես պատմական կարևոր սկզբնաղբյուր, թեպետ Դավրիժեցուն ևս Մանուկ Աբեղյանը դասում է իր իսկ բնութագրմամբ՝ «գրականության նորոգողների» շարքում: Անմիջապես նկատենք, որ այս կարգի մասնավոր արժևորումները Դավրիժեցուն նվիրված սակավաէջ գիտական գրականության մեջ և նրա անվան ու գործի տարաբնույթ, երբեմն՝ հերթապահ արծարծումներում ընդհանուր առմամբ գերիշխում են, և հայ պատմագրության ընդհանրականության մեջ նրա տեղի որոշադրման ու արժևորման առումով հանգեցնում են թյուր կամ ոչ ամբողջական ընկալումների: Հատկապես շատ է չարաշահվում «17-րդ դարի կամ ուշ միջնադարի խոշորագույն պատմիչ» բնորոշումը, որը, ճիշտ լինելով, այնուամենայնիվ, ընկալման մակարդակում փոքր-ինչ տարտղնված է և պահանջում է զգուշավոր կիրառություն: Հարցն այն է, որ այդ բնորոշումների ընկալողական

թյուն» գրքում, Երևան, 1988, էջ 3–16, ինչպես նաև Լենա Խանլարյանի ընդարձակ ու հանգամանալից «Առաջաբանը» Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» գրքում, Երևան, 1990, էջ 5–52: Ավելորդ չէ այստեղ նշել, որ ըստ Հրաչյա Աճառյանի ունեցած տեղեկությունների՝ «Առաքել վարդապետի տունը և գերդաստանը մնում են այժմ (1930-ական թթ. վերջերին–Ա.Ն.) Թավրիզում (Ղալայի Ս. Աստուածածին եկեղեցու նրբանցքում) և կրում «Պատմագրեան» ազգանունը» («Հայոց անձնանունների բառարան», հատոր Ա, Երևան, 1942, էջ 216):

2 ***Մայիս Ավդալբեգյան***, Հայ պատմագրության ժանրային մի քանի առանձնահատկություններ, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, Երևան, 1984, էջ 14: